ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-18/25-I/ΙΜΒ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արսեն Արտաշեսի Առաքելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 355 077 600 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 355 077 600 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, Երևան, Է. Հասրաթյան 7 Հ/հ՝ 900018005273 ՀՎՀՀ՝ 00008732 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝	Կազմակերպության տնօրեն՝
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.
Աշոտ Սերոբի Սաղյան	Արսեն Արտաշեսի Առաքելյան
Ծրագրի գիտական ղեկավար՝	Առաքելյան Արսեն Արտաշեսի
(ստորագրություն)	

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-18/25-I/ΙΜΒ պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արսեն Արտաշեսի Առաքելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-18/25-I/ΙΜΒ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 355 077 600 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահի՝

_____ Կ. Տ.
(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սաղյան

Կազմակերպություն

տնօրեն՝

_____ Կ. Տ.
(ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-18/25-I/IMB պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	40
Այլ պարբերականում հրապարակում՝	5
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	15

Կազմակերպության տնօրեն՝ _____ Արսեն Արտաշեսի Առաքելյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Խաչատրյան Զարուհի Աշոտի
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-18/25-I/ԻՄԲ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	313 215 395	62 643 079	78 303 848	78 303 848	93 964 620
2.	տնտեսական ծախսեր՝	41 862 205	8 372 441	10 465 551	10 465 551	12 558 662
3.	այլ ծախսեր՝	0	0	0	0	0
Ընդամենը՝		355 077 600	71 015 520	88 769 399	88 769 399	106 523 282

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիլիթ Մուշեղի Մելքոնյան

Կ. S.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-18/25-I/IMB պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**41 862 205**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	17 000 000
2.	*գազի ծառայություն*	9 000 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	500 000
4.	*կապի ծառայություն*	1 824 577
5.	*աղբահանություն*	1 000 000
6.	էներգախնայողության ծառայության մատուցում	11 037 628
7.	տնտեսական և շինարարական ապրանքներ	750 000
8.	նյութեր	750 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**0**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիլիթ Մուշեղի Մելքոնյան

Կ. S.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-18/25-I/IMB պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)
B - ամիսների քանակ
C - աշխատաժամանակի ռեժիմ
D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	տնօրեն	500 000	12	ներքին համատեղություն	40	6 000 000
Ցականովա Գոհար Վասիլիի	գիտական գծով փոխտնօրեն	0	0	ներքին համատեղություն	40	0
Խաչատրյան Զարուհի Աշոտի	գիտական քարտուղար	350 000	12	ներքին համատեղություն	40	4 200 000
Պոլիխատկո Բորիս Վլադիմիրի	տնտեսական գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Մելիքսեթյան Գոհար Հովհաննեսի	կադրերի մասնագետ	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մարդումյան Սոնա Սերգեյի	տնօրենի օգնական	300 000	12	հիմնական	40	3 600 000
Հովակիմյան Հրաչուհի Ռոբերտի	տնտեսական գծով փոխտնօրենի օգնական	125 000	12	հիմնական	40	1 500 000
Մելքոնյան Լիլիթ Մուշեղի	գլխավոր հաշվապահ	400 000	12	համատեղություն	20	4 800 000
Հայրապետյան Նարինե Հովհաննեսի	գնումների համակարգող	350 000	12	հիմնական	40	4 200 000
Հովհաննիսյան Ջուլիետտա Արթուրի	հաշվետար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Գևորգյան Կարինե Ռաֆայելի	քաղաքաշտպանության շտաբի պետ	55 000	12	համատեղություն	20	660 000
Եզիկյան Գրիգորի Շավարշի	գլխավոր ճարտարագետ	270 000	12	հիմնական	40	3 240 000
Նավոյան Գագիկ Զավենի	պարետ, վարորդ-մատակարար	235 000	12	հիմնական	40	2 820 000
Բուրջախյան Հռիփսիկ Առաքելի	լաբորանտ	25 000	12	հիմնական	10	300 000
Հովակիմյան Ռոբերտ Գրիգորի	տարաբանվոր	175 000	12	հիմնական	40	2 100 000
Կիրակոսյան Դավիթ Աշոտի	տարաբանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Թովմասյան Արսեն Վազգենի	տարաբանվոր	175 000	12	հիմնական	40	2 100 000
Հովակիմյան Գրիգոր Ռոբերտի	տարաբանվոր	125 000	12	հիմնական	40	1 500 000
Զաքարյան Հարություն Արշավիրի	տարաբանվոր	125 000	12	հիմնական	40	1 500 000
Մամյան Գևորգ Սարգսի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ջավադյան Ժորա Ավագի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ղազանչյան Միհրան Գևորգի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Բասեյան Արթուր Ասատուրի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Աբաջյան Ալվարդ Գրիգորի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովակիմյան Վարդուհի Ռոբերտի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովակիմյան Երանուհի Խաչիկի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000

Եգորովա Ելիզավետա Գեորգիի	հավաքարար	135 000	12	հիմնական	40	1 620 000
Բաղդասարյան Արմեն Արտյոմի	վերելակների սպասարկող	60 500	12	հիմնական	20	726 000
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Մարդու գենոմիկայի						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	0	0
Մայիլյան Կարինե Ռաֆիկի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Մկրտչյան Գոհար Մարատի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Զախարյան Ռոքսանա Վլադիսլավի	Ավագ գիտաշխատող	171 633	12	համատեղություն	20	2 059 596
Ստեփանյան Անի Սմբատի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Աճեմյան Սոֆի Արմանի	Գիտաշխատող	68 951	12	համատեղություն	10	827 412
Հայրապետյան Վարդուհի Հովհաննեսի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Ղազարյան Հովսեփ Կարապետի	Գիտաշխատող	68 951	12	հիմնական	10	827 412
Զավուշյան Անդրանիկ Ստեփանի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Մարտիրոսյան Գևորգ Վոլոդյայի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մելքոնյան Անի Հայկի	Կրտսեր գիտաշխատող	52 581	12	համատեղություն	10	630 972
Քիանիան Նարինե Ալբերտի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Մինասյան Արփինե Դավիթի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Խաչատրյան Գիսանե Վահագնի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Անտոնյան Շուշանիկ Արթուրի	Ավագ լաբորանտ	0	12	հիմնական	40	0
Ղուկասյան Լիլիթ Գոռի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Ավանեսյան Քրիստինա Կարենի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Լաբորատորիա Մանրէների գենոմիկայի						
Սեդրակյան Անահիտ Միքայելի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Հովհաննիսյան Ալվարդ Իլիասի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Առաքելովա Կարինե Ավետիքի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հակոբյան Գոհար Վլադիմիրի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Զախարյան Մագդալինա Կարենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	ներքին համատեղություն	20	1 261 956
Հակոբյան Շողիկ Սարգսի	Ավագ լաբորանտ	44 810	12	համատեղություն	10	537 720
Լաբորատորիա Էվոլյուցիոն գենոմիկայի						
Եպիսկոպոսյան Լևոն Միխայելի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Խաչատրյան Զարուհի Աշոտի	Ավագ գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	0	0
Մկրտչյան Սաթենիկ Լևոնի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Նազարյան Գայանե Ռուդիկի	Լաբորանտ	69 116	12	հիմնական	20	829 392
Մաղաքյան Սմբատ Սերգեյի	Լաբորանտ	69 116	12	հիմնական	20	829 392
Բարեղամյան Եվա Վարուժանի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Խումբ Բույսերի գենոմիկայի						

Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	Խմբի ղեկավար	410 068	12	հիմնական	40	4 920 816
Մելյան Գայանե Հրանտի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Գրիգորյան Բելլա Արկադիի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ասատրյան Արմինե Դերենիկի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Աբրահամյան Արմինե Վազգենի	Գիտաշխատող	68 951	12	համատեղություն	10	827 412
Հարությունյան Ֆրունզիկ Ավագի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Դալլաքյան Լիլիթ Վիկտորի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Լաբորատորիա Փորձարարական կենսաբանության						
Ցականովա Գոհար Վասիլիի	Ղեկավար	0	12	Ներքին համատեղություն	0	0
Այվազյան Վիոլետա Արտաշեսի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Հովսեփյան Լաուրա Միքայելի	Ավագ գիտաշխատող	171 633	12	հիմնական	20	2 059 596
Ներսեսովա Լյուդմիլա Ստեփանի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Գազարյանց Մարինա Գուրգենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Զանգինյան Հասմիկ Վլադիմիրի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ղազարյան Գայանե Սուրենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Պողոսյան Լինա Հենրիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հարությունյան Քրիստինե Սուրենի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Հովակիմյան Անի Աշոտի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Ղազարյան Մարիա Էդգարի	Լաբորանտ	69 116	12	հիմնական	20	829 392
Լաբորատորիա Բջջային տեխնոլոգիաների						
Բաբայան Նելլի Սամվելի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Գրիգորյան Ռուզաննա Միշայի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սարգսյան Նատալյա Կոնստանտինի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Խոնդկարյան Լուսինե Հերբերտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Գրիգորյան Նարինե Յուրիի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Կալիտա Ելենա Վլադիմիրի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Թադևոսյան Գոհար Լյովայի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Ապրեսյան Լիլիթ Սահակի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Մանուկյան Ալիսա Թադևոսի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Թևոսյան Անի Արտակի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Լաբորատորիա Բջջի կենսաբանության և վիրուսաբանության						
Կարալյան Զավեն Ալեքսանդրի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Կարալովա Ելենա Միքայելի	Առաջատար գիտաշխատող	166 425	12	հիմնական	15	1 997 100
Աբրոյան Լիանա Օնիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ավետիսյան Աիդա Սերգեի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հակոբյան Լինա Հայրապետի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սեմերջյան Զառա Բաբկենի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Ոսկանյան Հենրիկ Եղիշեի	Գիտաշխատող	103 426	12	համատեղություն	15	1 241 112

Առաքելովա Էլինա Ալեքսանդրի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Գևորգյան Վահագն Սմբաթի	Գիտաշխատող	68 951	12	հիմնական	10	827 412
Արզումանյան Հրանուշ Հարությունի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	համատեղություն	20	1 261 956
Պողոսյան Արփինե Արմենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Բաղդասարյան Բագրատ Վահագնի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Լաբորատորիա Հակավիրուսային դեղամիջոցների հայտնաբերման						
Զաքարյան Հովակիմ Սարգսի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Հակոբյան Աստղիկ Վարդանի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Իզմաիլյան Ռոզա Արտաշեսի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Գրիգորյան Ռաֆայելա Խորենի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Շավինա Անաստասիյա Ալեքսանդրովնա	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Մանուկյան Անահիտ Համբարձումի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Բեգլարյան Արմինե Արմենի	Ավագ լաբորանտ	44 810	12	հիմնական	10	537 720
Ղազարյան Արթուր Սեմիկի	Լաբորանտ	69 116	12	հիմնական	20	829 392
Լաբորատորիա Մոլեկուլաբջջային իմունաբանության						
Մանուկյան Գայանե Փաշիկի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Պողոսյան Դավիթ Ալբերտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մարտիրոսյան Անուշ Արամի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ղոնյան Սուսաննա Արամի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Խումբ Մոլեկուլային նյարդակենսաբանության						
Վարդանյան Վիտյա Անդրանիկի	Խմբի ղեկավար	410 068	12	հիմնական	40	4 920 816
Կարապետյան Տաթևիկ Հրաչյայի	Ավագ լաբորանտ	89 620	12	համատեղություն	20	1 075 440
Մկրտչյան Լիանա Էդվարդի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Լաբորատորիա Կենսագործընթացների համակարգչային մոդելավորման						
Նազարյան Կարեն Բաբկենի	Ղեկավար	238 435	12	հիմնական	20	2 861 220
Առաքելով Գրիգոր Գալուստի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Առաքելով Վահրամ Գալուստի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Մուրադյան Նելլի Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Պարոնյան Ադրինե Կարենի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Սարգսյան Արսեն Արթուրի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Ծատուրյան Տիգրան Բագրատի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Խումբ Կենսաինֆորմատիկայի						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	Խմբի ղեկավար	0	12	ներքին համատեղություն	0	0
Հակոբյան Սիրաս Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Նիկողոսյան Մարիյա Արմենի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Դավիթավյան Սուրեն Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912

Հակոբյան Մելինե Անդրանիկի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Խումբ Միկրոբիոմի հետազոտությունների						
Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	Խմբի ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Զախարյան Մագդալինա Կարենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	ներքին համատեղություն	20	1 261 956
Վարդազարյան Նելլի Էդուարդի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Սարգսյան Ռազմիկ Ռուբենի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Խումբ Վիրուսային էվոլյուցիոն էկոլոգիայի						
Ավագյան Հրանուշ Ռոբերտի	Խմբի ղեկավար	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հակոբյան Սոնա Արմենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Բայրամյան Նանե Վաչեի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						2790899
Ընդհանուր գումար՝						313 215 395

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (ԱԱՀ)

Կ.Տ.

Հավելված N 5
«20» հունվարի 2025 թ.
N 1-18/25-Ի/ԻՄԲ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում: Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում, պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն, բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Շենքային պայմանների պահպանում, կոմունալ պայմանների ապահովում, կոմունալ վճարների ժամանակին կատարում: Բազային, դրամաշնորհային և թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի շրջանակում իրականացվող հետազոտությունների վարչարարական աջակցություն և աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ենթակառուցվածքի պահպանման շրջանակներում նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգիայի, ջրի, ջեռուցման անխափան աշխատանքը, սարքերի աշխատանքային վիճակ, հետազոտությունների ամփոփման համար նվազագույն պարագաների և նյութերի ձեռքբերում՝ ընթացիկ հետազոտությունների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով:

Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանման շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

– Ուսումնասիրել HL-60 բջջային գծի բնութագրերը՝ կախված դիֆերենցման դասական եղանակներից: Մշակել նոր եղանակներ/նոր խթանիչներ HL-60 բջիջների դիֆերենցման համար, որոնք թույլ կտան ստանալ ծայրամասային արյան նեյտրոֆիլներին ավելի մոտ բնութագրեր:

- Ուսումնասիրել աուտոբորբոքային գործընթացների զարգացումը խթանող պիրինային ինֆլամասոմի ակտիվացման մոլեկուլային գործոնները:
- Ուսումնասիրել KCNQ5 կալիումական անցուղիների մուտացիաների հետևանքով առաջացող նյարդային համակարգի հիվանդությունների ախտաբանական մեխանիզմները: Xenopus հետերոլոգ էքսպրեսիոն համակարգում՝ բացահայտելու մինչև այժմ գոյություն ունեցող 35 մուտացիաների հետևանքով առաջացած սպիտակուցի ֆունկցիոնալ խանգարումները, մասնավորապես՝ անցուղիների դարպասման, թափանցելիության, ընտրողականության և էքսպրեսիայի հետ կապված խնդիրները:
- Ուսումնասիրել Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի (Georgia 2007) էկոլոգիան անտառային ցիկլից դուրս՝ բացահայտելու վիրուսի երկարաժամկետ պահպանման պատճառները Ասիական տարածաշրջանում, որտեղ բացակայում են նրանց կենսաբանական վեկտոր Օրնիթոդորուս տզերը: Կուսումնասիրվի անսովոր տերերում վիրուսի գենային էքսպրեսիան: Աշխատանքը նաև հնարավորություն կտա հասկանալ վիրուսի կենսաբանությունը, վերարտադրման ռազմավարությունը՝ կախված տարբեր տերերից: Ստացված արդյունքները հնարավորություն կտան մշակել նոր հակավիրուսային ռազմավարական մոտեցումներ կամ կիրառել գիտելիքները ատենուացված պատվաստանյութի տեխնոլոգիայում:
- Հայաստանում տարածված բակտերիալ ծագման վարակիչ հիվանդությունների կլինիկական առումով առավել խնդրահարույց հարուցիչների բացահայտում, ինչպես նաև վիրուլենտության ներուժի, մոլեկուլային համաճարակաբանության և հակամանրէային դեղամիջոցների նկատմամբ կայունության մեխանիզմների բնութագրում՝ ամբողջական գենոմի վերլուծության հիման վրա: Շարունակվելու է Հայաստանում առավել տարածված բակտերիալ վարակների հարուցիչների և այլ երկրներում տարածված հարուցիչների ազգակցական կապերի ուսումնասիրությունը՝ ամբողջական գենոմների վերլուծությամբ: Կատարվելու է նշված հիվանդությունների Հայաստանում շրջանառվող հարուցիչների առկա հավաքածուների պահպանում և համալրում:
- Հակաբիոտիկային դեղամիջոցներին և միջավայրի այլ փոփոխություններին ի պատասխան միկրոբիոմային համայնքների կազմի փոփոխության մեխանիզմների պարզաբանում:

Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Շարունակվելու են Արցախի վերին քարեդարյան Քարին Տակ քարանձավի 2018-2020 թվականների պեղումների ընթացքում հավաքագրված բրածո ոսկորներում պահպանված կենսաբանական մարկերների մոլեկուլային նույնականացման և վերլուծության աշխատանքները:

- Իրականացնել հնէաբանական պեղումներ Եղեգիս հնավայրում (Վայոց Ձոր)՝ բրածո մնացորդների հավաքածու կազմելու և հետագա հետազոտությունների համար:
- Գործարկել հաջորդ սերնդի սեքվենավորման ընդհանուր օգտագործման կենտրոնը, իրականացնել համատեղ հետազոտական ծրագրեր քաղցկեղի գենոմիկայի ոլորտում:
- Հայաստանում Մարսի անալոգային հետազոտական ծրագրի («AMADEE-24») շրջանակներում հետազոտել տիեզերագնացների առողջական վիճակի, ֆիզիկական ծանրաբեռնվածությանը օրգանիզմի դիմակայության գենոմային կենսամարկերները:
- Իրականացնել գիտարշավներ խաղողագործական շրջաններ՝ հավաքագրելու խաղողի տեղածին և վայրի բույսեր՝ հետագա պահպանման, նկարագրման և անձնագրավորման նպատակով: Հիմնադրվելու է խաղողի վայրի բույսերի պահպանման *in vitro* հավաքածու: Միաժամանակ հավաքագրվելու է ՀՀ ծիրանի կոլեկցիոն այգու նմուշները՝ գենետիկական բանկի ստեղծման նպատակով:

Բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Ստանալ կոքսակիվիրուս B3 և B4, ցիտոմեգալովիրուս, ռինովիրուս A1 վիրուսների մեծ քանակություն, պահեստավորել, ինչպես նաև մշակել հակավիրուսային համապատասխան մոդելներ և որոշել օպտիմալ պայմանները՝ հակավիրուսային հետագա հետազոտությունների իրականացման համար:
- Չկարգավորված հատվածներ պարունակող սպիտակուցների ֆոլդինգի և կայունության *in silico* ուսումնասիրություն՝ 14-3-3 ընտանիքի կարգավորող սպիտակուցների հետ նրանց սպիտակուց-սպիտակուցային փոխազդեցության միջոցով: Որպես չկարգավորված հատվածներ պարունակող սպիտակուցներ՝ կուսումնասիրվեն p53, պիրին և SARS-Cov-2-ի նուկլեոկապսիդային սպիտակուցները: Այս հետազոտությունը հնարավորություն կտա հասկանալ չկարգավորված սպիտակուցների համապարփակ մոդելավորման առանձնահատկությունները, որը ունի կարևոր տեսական նշանակություն և կիրառում:
- ԴՆԹ վնասվածքների և ռեպարացիոն ուղիների տարբերության ուսումնասիրություն քաղցկեղային 2D և 3D մոդելներում: Հետազոտությունը հնարավորություն կտա բացահայտել մարդու օրգանիզմին առավել բնորոշ քաղցկեղային բջիջներում բջջամոլեկուլային մեխանիզմները՝ հակաքաղցկեղային դեղամիջոցների և/կամ ճառագայթման կիրառման ժամանակ: Քաղցկեղային 3D մոդելի մշակումը հնարավորություն կտա գնահատել քաղցկեղով հիվանդների՝ դեղամիջոցների/կամ ճառագայթման նկատմամբ անհատականացված զգայունությունը:

Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- «Santé Arménie» հիմնադրամի հետ համատեղ կենսաբանական նմուշների բանկը համալրել արյան պլազմայի, բջիջների, ՌՆԹ և ԴՆԹ նմուշներով առկա կլինիկական հետազոտությունների ռեգիստրների շրջանակում:
- Գործարկել գենետիկական ախտորոշիչ լաբորատորիա, որի նպատակն է մատուցել հիվանդությունների ախտորոշման ծառայություններ և փորձարկել ինստիտուտում մշակված ախտորոշիչ մոտեցումները:

Այլ գործունեություն՝

- միջազգային և տեղական դրամաշնորհային նախագծերի ներկայացում,
- հոդվածների, դրամաշնորհային հայտերի փորձագիտական քննություն (peer-review),
- ՀՀ կառավարության գերատեսչությունների ներկայացրած նախագծերի ոլորտային փորձագիտական կարծիքի տրամադրում,
- երիտասարդ կադրերի մասնագիտական հմտությունների կատարելագործում և դասավանդում:

Ակնկալվող արդյունքները. աշխատանքային պայմանների ապահովում, որոնք թույլ կտան զբաղվել այլ ֆինանսական միջոցներով (տեղական և միջազգային դրամաշնորհներ, ծառայությունների մատուցում, դրամահավաքներ և այլն) իրականացվող գիտահետազոտական և գիտակրթական գործունեությամբ, իրականացված աշխատանքների արդյունքների տպագրություն գիտական հոդվածների տեսքով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Հավելված N 6
«20» հունվարի 2025 թ.
N 1-18/25-I/ΙΜΒ պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	1-ին եռամսյակ
2	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	2-րդ եռամսյակ
3	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	3-րդ եռամսյակ
4	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում,	Վարչարարական, փորձարարական և տեսական,	4-րդ եռամսյակ

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

	հետազոտություններ	«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիա
Մոլեկուլային կենսաբանության
ինստիտուտ ՊՈԱԿ

National Academy of Sciences
of the Republic of Armenia
Institute of Molecular Biology SNGO

N2465-19
29.01.2025 թ.

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ՍԱՂՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղյան

Ի կատարումն ՀՀ ԳԱԱ 22/01/2025 թ. N 24-01/18 գրության՝ ներկայացնում ենք ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների մասին» պայմանագիրը՝ հավելվածներով /2 օրինակից/:

Հարգանքով՝

Ա. Առաքելյան
Տնօրեն

ՀՀ, 0014 Երևան, Հասրաթյան 7 «» Հեռ. 37410281626 «» Ֆաքս 37410282061 «» Էլ. Փոստ imb@sci.am

7 Hasratyan St., 0014 Yerevan, RA «» Tel. 37410281626 «» Fax 37410282061 «» E-mail imb@sci.am
www.molbiol.sci.am